



19 (174). ՓԱԿԱԳԻՐ

Մարդու մե էշ դահցեր էր ու շատ բանելուց խուստա էր էղի, էլ շուգեց բառադայի շերդ ու խոտ ուտե, տարավ թալեց սար, դառնավ էկավ տուն:

էշն ուրին մաղարե-չեր մե գտավ, ցերեկ կ'արծեր, գիշեր կը մտներ մըջ շերին: Քանի մե ամսվա մեջ յուչու փոխվավ, դառնավ էրկու-իրեք տարեկան քուռկու պես, տոճիկ կը թալեր, շուֆթա կը զարկեր, օր քիսներ քարին կէներ փշուր-փշուր, գել ու գազանից լն մունաթ չը քաշեր:

Աղվեսն ու դել խորուրգք էրին, թե դուշմընութենով չընք կոնա զէշ ուտի, պետք է ուստութեն առնինք ձեռք մի: Քանի հեղ գացին-էկան՝ էղան ճանչվոր: էն մեկ օր աղվեսն ըսեց.

— Ախպըրտի՛ք, դինա՞ք ինչ, մինակ ճանչվոր էղնելուց բան դուս չի գա. ախշարք օրենք կա, կարգ ու կանոն կա, էկեք զմեր տարիքն ըսինք, մըզնե ո՛ր մեկն օր տարուց պզտիկ է, էնի ուր մեծին հնազանդի:

Գելն ըսեց.

— Ախպըրտի՛ք, դինա՞ք, ես է՛ն դելն իմ, օր յառջին հեղ աստված ստեղծեց, էկա կանա Ադամու յառջև, Ադամ զիմ անուն դրեց գել:

— Ը՞ռո, դու դԱդամ տեսե՞ր իս, էլ քըզնե մեծ՝ ախշարք կը ճարվի՛:

Աղվեսն ըսեց.

— Ես է՛ն աղվեսն իմ, օր Նոյան հետ մտա տապան, սաղ դուս էկա: Մըկավան աղվըսներ իմ թոռներն ին:

Գեղն ըսեց.

— Օղորդ է, ընծնե փշու մե պզտիկ իս, հմա ո՞ն գինա նրչօ  
հարի մկա քա՞նի տարի կէնե:

Էջն ըսեց.

— Ես իմ ումր քաղաք իմ յընցուցի: Իմ տեր կարգըցվոր մարդ  
էր, զիմ Լղնելու տարին վըր իմ աջ յետին չոտաց նալին գրուկ է,  
թե կոնաք՝ կարգըցեք, դիմնաք,— բսեց ու զոտք բանձրցուց:

Աղվեսն հեռվանց իշկեց, ըսեց.

— Էդի փակագիր է, ես չըմ կոնա կարդա, մեր վարժատուն  
իդա հմլա դիր չկեր:

Գեղն ուրախ-զուրախ մոտեցավ, օր զփակ գիր կարգեր՝ չորիս-  
կոց մինակ լսեց, շանեն ջնջիւավ, աչքերն էկան ի դուս:

Աղվեսն ըսեց.

— Աստված զիմ վարժապետի հողին լուսավորե, օր ընծի փա-  
կագիր կարդալ շը սորվըցուց:

